

Գավառի N1 հատուկ դպրոցը հյուրընկալել էր իր բարերարներին

22.09.2015

Այսօր Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի N1 հատուկ դպրոց էին այցելել Նյու-

Յորքի բարեկամների խորհուրդի կազմակերպության եւ ,Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան գրասենյակի եւ րկայացուցիչները՝ դիտարկելու Նյու-

Յորքի բարեկամների խորհուրդի կազմակերպության կողմից տրամադրված միջոցներով այստեղ 2015 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները: Շինարարական աշխատանքների դիտարկմանը եւ բացման արողությանը մասնակցեց նաեւ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Ըստ դպրոցի տնօրեն Լարիսա Զազյանի ներկայացման՝ այս տարվա ապրիլին Նյու-

Յորքի բարեկամների խորհուրդի կազմակերպության միջոցներով ձեռք է բերվել եւ դպրոցին հատկացվել Գազել ե մակնիշի մեկ ավտոմեքենա, իսկ գարնան եւ ամռան ամիսներին տեղադրվել վերելակ, նորոգել շենքի մուտքը, 2 սանհանգույց, մարզադահլիճը, խոհանոցը, որտեղ տեղադրվել է կահույք, սառնարան եւ տաք ջրի կաթսա: